ւելի ստացեալն յետս դարձուսցէ առ առաքօղսն իւր։

ԳԼՈՒԽ ՃԲ.

Ով ոք որ գացէ շնորհս լուսածել 'ի յերեսս յերկրին մերոյ հայաստանեաց, դումզի որթն վասն ներկ առնելոյ, և բուսուցանել լեղակ, գործել բէգռաս, մահուդ ըստ կերպին և նմանութեամբ եւրոպացւոց, և գտանել անտառ այսինքն արմատ անուանեալն Ջնսան, միմիայն մի անգամ գացէ շնորհս 'ի տանէն հայոց այսպէս։

Ջանսան գտանողն դահեկան երծաթ .	10,000.
Ղումզի որթն պատրաստողն . .	10,000.
Լեղակ բուսուցանողն և պատրաստողն .	10,000.
Լօնդրա պատրաստողն . . .	10,000.

ԳԼՈՒԽ ՃԳ.

Ով ոք ընդ ումեք որ գանգատեսցէ վասն քրէական մեղաւորի, եթէ սպանողի, եթէ վիրաւորողի, եթէ հարկանողի և եթէ նախատողի 'ի դրունս ամէն դատաւորի, դատաւորն հրաւիրեսցի մեղաւորին և յայտնեսցի նմա գանգատն գանգատողին, և եթէ մեղաւորն սպանեալ ումեք իսկոյն դիցէ 'ի բանտ, և եթէ վիրաւորեալ, և կամ հարկանեալ, և կամ նախատեալ, տացէ մե-